



**Ռուսաստանի Կառավարության «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտեան
Հայաստանի մասին») Դեկրետի 100-րդ տարեդարձի կապակցութեամբ**

1918-1920 թթ.-ին Հայկական Հարցի կարգաւորման ենթատեքստում հայերի իրաւունքների վերաբերեալ կայացուած որոշումների մէջ կարեւոր նշանակութիւն ունի 1918 թ. յունուարի 11-ին Ռուսաստանի Կառավարութեան ընդունած Դեկրետը «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտեան Հայաստանի մասին»):

Լրանում է Դեկրետի 100-րդ տարեդարձը եւ ինչպէս մի շարք այլ որոշումների պարագային, այս որոշումը նոյնպէս ընդունուել է, սակայն ցաւօք առ այսօր չի իրականացուել, թէւ դրանից Դեկրետի նշանակութիւնը հայ ժողովրդի իրաւունքների մասով Հայաստանի նկատմամբ, բնաւ չի նուազում:

Դեկրետում գործածուած են «Թուրքահայաստան», «Թուրքահայաստանի հայեր» ձեւակերպումները, սակայն մենք հասկանալի պատճառներով գործածելու ենք «Արեւմտեան Հայաստան» եւ «Արեւմտեան Հայաստանի հայեր» ձեւակերպումները, որոնք առաւել ճշգրիտ են ազգային, պատմական, իրաւական, քաղաքական, մշակութային ու քաղաքակրթական իմաստներով:

Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների մասով Դեկրետը անդրադարձել է մի քանի կարեւոր հարցերի, այդ թում`

-ճանաչելով Արեւմտեան Հայաստանի հայերի «ինքնորոշման իրաւունքը` ընդհուպ մինչեւ անկախութիւն»,

-«ռուսական զօրքերի դուրսբերումը եւ անյապաղ հայ ազգային միլիցիայի բանակի ստեղծումը` Արեւմտեան Հայաստանի բնակիչների անձնական եւ նիւթական անվտանգութիւնն ապահովելու նպատակով»:

-«հայ փախստականների, ինչպէս նաեւ տարբեր երկրներում սփռուած հայ գաղթականների` անխոչընդոտ վերադարձը Արեւմտեան Հայաստան»:

Ինչպէս տեսնում ենք Դեկրետում նշուած որոշումները արդիական են, դա է պատճառը, որ Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան գործում ու գործընթացում Մերի խաղաղութեան պայմանագրին ու ԱՄՆ նախագահ Վուդրոյ Վիլսոնի իրականացրած Իրաւարար վճռին զուգահեռ կարեւորում ենք Դեկրետի թե՛ պատմական, թե՛ իրաւական ու քաղաքական նշանակութիւնը մեր ժամանակներում:

Ըստ երեւոյթին Ռուսաստանի Կառավարութիւնը նոյնպէս մեծ նշանակութիւն է տուել փաստաթղթին, քանի որ 1918 թ. յուլիսի 10-ին այն ընդգրկել է Ռուսաստանի առաջին Սահմանադրութեան մէջ, 6-րդ յօդուածում:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) բարձր գնահատելով Ռուսաստանի Կառավարութեան ընդունած «Թուրքահայաստանի մասին» («արեւմտեան

Հայաստանի մասին) Դեկրետի պատմական նշանակությունը եւ արդիականությունը 100-ամեայ յոբելեանին նուիրուած կազմակերպում է միջազգային համաժողովներ եւ հեռուստակամուրջ՝ «Մոսկուայ – Երեւան - Սանկտ Պետերբուրգ – Փարիզ - Դոնի Ռոստով – Լոս Անջելես - Վոլգոգրադ – Բեռլին – Մոչի – Ստոկհոլմ – Երուսաղէմ»՝ քաղաքական գործիչների, ազգային խորհրդարանների պատգամաւորների, կուսակցութիւնների ներկայացուցիչների, առաջատար հասարակական գործիչների գիտնականների, պատմաբանների, վերլուծական կենտրոնների մասնակցութեամբ:

Յաւելենք նաեւ, որ Հայկական Հարցի վերջնական լուծման եւ Մերձաւոր Արեւելքում կայուն խաղաղութիւն հաստատելու համար հարկաւոր է կեանքի կոչել եւ իրականացնել, ինչպէս Սերի Խաղաղութեան պայմանագրի եւ ԱՄՆ նախագահ Վուդրոյ Վիլսոնի Իրաւարար վճռի, այնպէս էլ Ռուսաստանի Կառավարութեան ընդունած «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտեան Հայաստանի մասին») այս պատմական Դեկրետի յօդուածները Հայաստանի վերաբերեալ:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ

11.01.2018 թ.